

ՔԱՐՈՁ

Ի ՇԽՄԱՀԱՄԱՆՑ ԳԻՒՂ:

ԽՈՋԱԳԻՐ-ԵՆԻ ԱՐԱՐՈՒՄ ԿԱՌԱՐՈՒՄ:

Յիսուսի Եկեղեցին գրեթէ աշխարհքի համայն քրիստոնեաներէն աւաւել մերոնց համար ինչ փսիմ՝ և բարձր նշանակութիւն ունենալը բիրտ անգամ՝ ասուած, ապացուցուած, զրուած և հրատարակուած է: Ուստի ես կկարծեմ թէ այս միտաց անհրաժեշտ ճամարտութիւն լինելը չընդունող շատ քիչերը կձառուին մերոնց մէջ: Այն անձը, որ քիչ թէ շատ տեղեակ է Հայի անցեալ կենաց, գրեթէ նորան արդի դրութիւնը ինչ հանգամանքներով չըջապատեալ է, չէ կարող անկասկած անտարբեր աչօք նայել Եկեղեցւոյն վերայ: Եթէ հայրենասիրութիւնը առաքելութիւն է, եթէ բնական և գերբնական օրէնքները մարդուս դէպ ի յայտ կէտը կմղեն, եթէ դորանով մաքրեալ սրտերը և յանուն դրան իւրեանց արիւնը զոհ բերող անհատները ինկկի կհամարուին, ուրեմն անհրաժեշտ է Եկեղեցւոյ մեզ համար միւս քրիստոնեայններէն աւելի նշանակութիւն ունենալը և նորան մեզինք մեր ազգութեան փսմադրոյն տարր ճանաչուիլը: Ըստ որում՝ նա է եղել և պիտի լինի թէ նախնի դարերին մէջ և թէ արդի ժամանակներուն Հայ ժողովուրդեան հայրենասիրութիւնը փառ պահելու և պահպանելու միակ միջոցը և նորան հոգեկան և մարմնական երջանկութեան սերմերի աճելու և զարգանալու պարտեղն ու անդաստանը:

Իրաւ է չենք կարող ուրանալ թէ նա (Եկեղեցին) հին դարերին մէջ այլ գէպքերի և պարագաների նմանակեալ ներգործել է ժողովուրդեան վերայ, իսկ արդի ժամանակներուն ուրիշ հանգամանքների տակ կկառավարէ և պիտի կառավարէ իւր զաւակներին: Սակայն եթէ այնպէս և եթէ այսպէս՝ մենք մեր գոյութեամբ Եկեղեցւոյն պարտական ենք: Այս կէտը քաջ և հասկանալի կերպով լմբռնելու համար հարկ է նախնեաց կեանքը լաւ իմանալ՝ հետեւապէս և տեղեակ ըլլալ մեր ազգայնութեան չըջապատեալ արդի պարագաներին:

Արդ ամենայն որ դիտէ թէ մի բարի հայր իւր զաւակի փառ երեսնաց հետ ընկերակցութիւն անելը չկամենար՝ երկիւղ կրկով իւր որդւոյ բարոյականի խանգարուելէն: Ամենայն անձը կխոստովանուի թէ մի լաւ և պարզ էակ կարուի և կփառնայ, մի այլ յոռի և անարգ արարածից: Ուստի այս կէտէն կարող ենք եզրակացնել թէ մի ժողովուրդ ևս կարող է խանգարուելով կորցնել իր ազնիւ յատկութիւնները, երբ իրան դրացի ազգերը՝ բարոյականի նկատմամբ իրանից փառթար վիճակի մէջ կգտնուին, և երբ ինքը չի ունենար իրան փառից հետի պահող կէտեր:

Այս միտքը բարոյական է՝ հետեւապէս և հերքելն ալ անկարելի:

Այժմ համեմատելք անգամ մը ուրեմն մեր հին կեանքը՝ մեզ դրացի եղած ազգերի մինի կենաց հետ: Ի՞նչ կգտնենք: Մինի մէջ կտեսնենք անգթութիւն, աւրելու և քարուքանդ անելու սէր և համակրութիւն, այրոց անգործութիւնը և խաղաղութիւնը խախտելու միտում՝ և ձգտում, նորանից ճնշելու և նեղացնելու փափաղ և բաղձանք, մի խօսքով վայրենութիւն: Միւսին մէջ մեր աչքերին կգիպէ՝ հանգստութեան և օրինաւոր կենաց համակրութիւն և ցանկութիւն, ոչնչացնելէն և փչացնելէն հետի լինելու նկար և պատկեր, դէպ ի խղճի ընդդէմ կէտերը անտարբերութիւն և զրդուանք, բանասիրութիւնը, նենգութիւնը և պատրանքը ատել և նորանից խուսափել: Եւ փոխանակ սորանց կնշմարենք ազգային բարոյական միտութիւն, ընկերութիւն, առաքելութիւն, բարեգործութիւն, բարեպաշտութիւն, ողորմածութիւն, կարճ ըսելով՝ Քրիստոսի Երկնային կրօնի ցոյց տուած պողոտան և ճանապարհը:

Արդ ո՞վ էր. և ի՞նչ մի ահագին զօրութիւն այս երկու դրացի ազգերի մէջ՝ այսքան մեծ տարբերութիւն ձգողը և տարածողը: Ամենայն քիչ թէ շատ բանիմաց անձը դիտէ և կհասկանայ անշուշտ թէ այդ առաջ բերողը Յիսուսի ծայրագոյն բարոյականը հետեւապէս Հայաստանեաց եկեղեցւոյ նուիրապետական զանն էր: Իրաւ է՝ չենք կարող չառարկել թէ նախ քան զՔրիստոնէութիւնը ևս ազգի կենաց ընթացքին մէջ էին օրինաւոր կենցաղավարութիւն: Սակայն հարկ է ըսել թէ առաջ աւելի աղօտ և նսեմ ձևով, իսկ յետոյ իրրեւ պայծառ լոյս արեւու: Հայի սկզբնական համեստ վարքը ու բարքը, խաղաղասէր բնաւորութիւնը և այլ իւր ունեցած ազնիւ յատկութիւնքը միանալով հեշտ կերպով Քրիստոսի բարոյականի հետ, իրան այնտեղ հասցրեցին, ինչ տեղ որ կառաջնորդեն այլ վարդապետութեան բարձր սկզբունքները:

Ի՞նչեր չեն արած մեր նախնիք յանուն քրիստոնէութեան, քանի որ Ասիոյ միւս ազգերը բրնտութեան գաւազանի և մահակի տակ գրեթէ հողի հետ հաւասարուելով իրրեւ ոչխար ի սպանդ կվարուին, Հայ ժողովուրդը գոնէ բարոյական ընկերութեան ազատութեամբ կհրճուէր, հոգեոց և խղճի անգործութիւն կփայլէր: Ահաւասիկ նոյն իսկ այս կեանքին էին, որ Հայի հոգին բարձրացրին, սլացրին ամպերից վերեւ, զարդարեցին նորան վեհանձնութեամբ, որով նա կարողացաւ տանել և կրել մի մեծահոգի համբերութիւնով՝ քսում նեղի նեղութեանց և չարչարանաց, սոսկալի դառնութեանց և թշուառութեանց հասցնելով իւր գոյութիւնը այս օրս: Բէպէտ եղած են աշխարհքի այլ և այլ անկիւններումը ուրիշ քրիստոնեայ երկիրներ ևս, որոնք ունենալով, սուրբեր, մարտիրոսներ, նահատակներ, պերճախօս Հայրապետներ, ճարտասան Եպիսկոպոսներ, բեմաւսաց Աւարդապետներ, ծաղկեցրած և զարգացրած են քրիստո-

նէական կրօնի տարրեր իւրեանց մէջ, հետեւապէս նորան համար թշուառութեանց են ենթարկուել, սակայն չէ կարելի ըստ ինձ ցոյց տալ մի աշխարհ, մի ազգ, որ այս կէտերուն մէջ Հայաստանի հետ համեմատուէր և հաւատարուէր:

Ահա թէ ուր տեղ է Հայի ազգայնութեան վստահութեանց զխառնութեան և նշանաւոր կէտերից մէկը:

Արդ շնայելով այս սրբազնութեանց, եղած են անձինք, որոնք թեթեւամտութեամբ մի ազգի արժանաւորութիւնը նոյն ազգի աշխարհային մեծութեան, փառացի փառք բարձրանալու յաղթութեանց, արիւնշահող սրտերազմներուն, երկիրների աւերումն, միլիոնաւոր անձանց մի գայիստի տակ ենթարկելուն, խորամանկութեամբ, բանարկութեամբ, աշխարհքից ազգեր անհետացնելուն և այլ այսպիսի կէտերուն են որոնած: Սակայն այս սկզբանց վերայ հիմնեալ քաղաքականութիւնը սրտաւ և մի զզուելի պողոտայի վերայ կանգնած լինելը՝ այժմ ալ մի մարդասէր, բարոյական և այլ շատ զովելի յատկութեամբ զարդարեալ անձը չի ուրանար: "Մի ազգի արժանաւորութիւնը ասած ու հրատարակած են շատ անգամ՝ երևելի և տաղանդաւոր զրիւներ՝ թէ հարկ է որոնել նոյն ազգութիւնը կազմող անհատների առ միմեանս ունեցած կամ եղած սերտ կապերի, և նորանց մէջ գտնուած ազնիւ գաղափարների, միակրօնութեան, բարոյականութեան, ընկերսիրութեան, ընտանեկան կենաց օրինաւորութեան ու սրբազնութեան, և այլ այսպիսի շատ վսեմ յատկութեանց աստիճաններին մէջ": Այս նկատմունքներուն նայելով և գէթ Ասիոյ ազգաց և ազանց վերաբերմամբ ծառելով՝ ըստ ինձ կարող ենք համարձակ պնդել թէ՛ աշխարհքի այդ մասի մէջ եղած ազգերից ամենէն բարձր մեր նախնիքն են եղած մեր առաջ բերած մտքերով զարդարեալ:

Ուր է ի՞նչ եղան աշխարհակալութեան սիրահարը, ի՞նչ տեղ անհետացան մեր զրացի հին ազգերը, որոնց շատերն ալ մեզինց բազմամարդութեան, զինուորական ճարտարութեան և այլ մի բանի կողմանէ բարձր են եղած:—Արան ինչպէս մի կաթիլ ջուր մարդկութեան Ավիկանոսին մէջ: Իսկ Հայը այնքան բիւրաւոր աղէտներից յետոյ կայ և կմնայ մինչև այսօր ունենանալով տակաւին բաւականին դիմացկուն և զօրաւոր տարերք՝ որ պէտք է մնայ յաւիտեան Նրեւի թէ՛ այս ազգը կարճ ըսելով նորանից մի աւելի նշանաւոր, մի առաւել թանկագին և պիտանի իր է ունեցել, որ պատճառ և առիթ է եղած իւր տեղութեան և զոյգութեան:

Արդ այդ սրբազան իրը ինչպէս վերեն ալ ասեցինք՝ Հայաստանեայց եկեղեցին է, որին պարտական ենք ալ թէ՛ միայն մեր փրկմամբ և դերժմամբ, Հապա և մեր պատուական լեզուի աճելուն և զարգանալուն միջոց զառնալուն համար, որոնց երկուսն ալ նախնիք արիւնով գնելով, բիւր անտանելի ցառոց տակալով և համբերելով, հազար և մի սոս-

կալի և քստմենի դէպքերի, և պատահմունքների ընկճելով և ենթարկուելով հասցրել են ժառանգարար մինչև մեր օրերը: Որչափ անգին գանձ, սրբազան և նուիրական աւանդ: Մի ընկճէք ո՞վ Հայութեան հոգեւոր և մարմնաւոր զաւակներ, դորանց պահպանութեան դժուարութիւնը տեսնելով, ձեր առաջ դուրս եկած արդիւքները և խոշնգոտները նշմարելով՝ գործոց բազմութիւնը և ձեր սակաւութիւնը դիտելով: Նախախմամութիւնը ձեզ օգնական և նեցուկ է: Մեր Հայրենիքը մեզ կարօտ է, այս դիտմամբ երջանիկ պիտի համարենք զմեզ: Ես այնպէս կկարծեմ թէ՛ դժբաղտ և մի ոչինչ էակ է այն անձը, որ իւր հայրենեաց պիտանի չէ: Կամ ուրիշ տեսակ տեսելով իւր հայրենիքը իրան կարիքը չունի: Որչափ ապուշ և խնդ պիտի լինենք, որ դէպ ի մեր նախնեաց մեզ հասցրած սրբազան աւանդներն հակակրօնութիւն ըլլալէ քան: Այսպիսիքն անգամ պատրաստ են իւրեանց արեան վերջին կաթիլն ի սէր իւրեանց նախնեաց աւանդներին պատարագ մատուցանել: Մենք արդի դարիս մէջ կարծես թէ նախնեաց աւանդներին նախանձախնդիր լինելու ճանապարհից չեղուկ ենք: Այսօր ցաւով սրտի կ'իշխեմ թէ մեր հազար և մի վտանգներէն դերժեալ Եկեղեցւոյն մէջ և ազգի գոգցես առանց մեր գիտութեան փոփոխութիւններ մտցրած լինելունս ի զատ, դէպ ի նա նախնեաց ունեցած սիրոյ շատ փոքր մասն ունինք: Մենք այժմ բոլոր աշխարհ ցրուեալ Հայիրս օտար լեզուները առաւել եռանդով և սրտով կուսումնասիրենք քան մեր սեպհականը: Եւ ահա այս իսկ պատճառաւ է, որ մենք երիտասարդներս ըստ մեծի մասին գրեթէ ոչ Հայ ուսումնական ենք և ոչ օտարազգի գիտնական:

Ով սուրբ նախնիք՝ թող շարժուին Ձեր ոսկորները դէպ ի Ձեր մեզ հասցրած այդ սրբազան աւանդները ունեցած ստոնութիւններս և անտարբերութիւններս զգալով: Դուք, որ քաջ հովուի նրման, անվնհր սրտով թաղաւորաց, իշխանաց, ուստիկանաց, ազատաց, քաղաքացւոց, գիւղացւոց, և այլ ամեն կարգի անձանց միեւնոյն բանը կ'քարոզէիք, ազատարձակ համարձակ քրիստոնէական կրօնի ճշմարտութիւնները կաւանդէիք, նորանց սրնընդան, վարուց, բարուց, կ'հակէիք: Այսօր Ձեր զաւակներից շատերը այլ և այլ առիթներով թողած իւրեանց սեպհական Մայր Հայաստանեայց ուղղափառ Եկեղեցին, քցած Ձեր սուրբափարախը՝ ընկել են օտարների պիղծ գոգը: Նրեւի թէ, ո՞վ սուրբ նախնիք, Ձեր տեղը ձեզ նմանները քիչ կան ժառանգած, որոնք իւրեանց սակաւութեան առիթով չեն կարողանար ձեր բանաւոր հօտին վայելչապէս և անվտանգ յառաջ վարել:

Որչափ նախատանաց՝ յանդիմանութեանց՝ թուքի մուրի արժանի են այն մեզմէ անջատեալ և բաժանեալ եղբարքն և քոքը, որոնք անարգելով իւրեանց երակների մէջ վաղած Հայ արիւնը՝ իրանք զիրանց՝ Պապականութեան, Աւետերակա-

նութեան, և այլ չեմ գիտեր ինչ անուններով կոչուեցին թողնելով և հետանալով իւրեանց հա-
րազատ ազգից, որուն մինչև այսօր պայծառ լոյ-
սի նման կիսալլի նախնեաց սերմանաւ առաքինու-
թեանց շատերը: Այլ կարող է այսօր ուրանայ Հայ
Ժողովրդի հիւրասիրութիւնը, հաւատարմութիւնը,
անձնանուիրութիւնը, գերգաստանների մէջ մի-
մեանց վերայ եղած վստահութիւնները, ամուսնա-
կան յարաբերութեանց մէջ տիրած օրինաւորու-
թիւնները, ընտանեկան կենաց սրբազնութիւննե-
րը, քրիտոսնէութեան նախնի դարերին արժանի
վարքն ու բարքն, բարեպաշտութիւնը, ջերմեռան-
դութիւնը, որոնք բոլորն ալ նախնեաց քրտինքով
են մշակուել:

Արդ նախնիք այս ամենը անելու համար, հան-
դեսութիւն, ու անգործութիւն չունէին, զիւղէ ի
զիւղ, քաղաքէ ի քաղաք, յաւանէ յաւան ան-
դադար կիրթեցնէին, և իւրեանց ջանքով ու ծի-
գովը կաշխատէին պարտքերնին մի արգար խղճի
հատուցանելու: Այս նկատմունքներով հարկ է
ասել թէ նախնեաց ժամանակը վաղեւոր մեծ նը-
շանակութիւն են ունեցել: Մեր լուսաւորութեան
կեդրոնը նորանք են դարձած: Այսօր մեր (գրա-
ւոր) գրականութիւնը կազմող գրող խիստ մեծ մա-
սը հոգի ու բան է: Ամենայն զիւղ իրանից փոքր
հետի մի վանք շինելու հետամուտ եղած, և որուն
մէջ մի միաբանութիւն հաստատելով իւր հոգեւոր
օգտին է ծառայացրած: Թէ նախնիք որչափ մեծ
սէր և եռանդ են ունեցել զէպ ի վանքերը՝ բաւ է
այն աստուածային տաճարներից այժմ մեզ հա-
սածների արձանագրութիւնները աչքէ անցնել, և
ամեն բան մեզ հասկանալի կլինի: Իսկ այժմ Հա-
յաստանից Եկեղեցւոյ հոգեւոր և մարմնաւոր
պաւսնների սրտերի միջից կարծես այն սէրը պակ-
սել է, այն ջերմեռանդութիւնը՝ բարեպաշտութիւ-
նը քչացել է: Այս գիտմամբ մեզքն ոչ աշխու-
հականացն է և ոչ ալ հոգեւորականաց: Մեր մէջ
արդ եղած պակասութիւնը մեր եկեղեցւոյ հոգեւոր
և մարմնաւոր որդւոց առ միմեանս եղած պարտա-
կանութեանց ըստ օրինի չկատարուելէ կառա-
ջանան: Ազգ ասածդ ժամացոյցի նման մի բան է,
որուն մէջ հարկաւոր պաշտօն կատարող գոր-
ծիքներ կան, որոնցից եթէ ամենայնոքնն ալ աւ-
րուի, ժամացոյցին եթէ գործելն ալ չդադարի զէթ
կատարելութիւնը կպակսի: Այսպէս եթէ մի ազ-
գի ժամկոշներն ալ իւրեանց պարտքը օրինաւոր
չկատարեն, անշուշտ եկեղեցւոյն մի բան կպակսի:

Երկու տարի առաջ սուրբ Էջմիածին գոնուե-
լով Աւհարաւ Հօր սուրբ Աջն համբուրելու ար-
ժանանալիս, առաջին խօսքն այս եղաւ թէ, "Իմ
առ ազգն և առ եկեղեցին ունեցած պարտակա-
նութեանցս առաջինը Հայաստանեայց Եկեղեցւոյ
հոգեւոր և մարմնաւոր որդւոց առնչութիւնը օ-
րինաւորապէս հաստատելն պիտի ըլլայ": Այս բար-
ձր միտքը, որ մի բարձր մարգոյ ասելու արժանի
և վայելուչ է, ես մեր բոլոր պակասութիւնները

ուղղելու ակն ու աղբիւրն դիտեմ: Մի անգամ
եթէ մեր հասարակաց Հօր բաղձանաց համաձայն
Հայկական Եկեղեցւոյ որդւոց սրտերը միմեանց
հետ կապուին ու կաշկանդուին, որ մի հարուստ
ժամանակի կարօտ է, նորանից յետ կնայիս որ
բիւր բարիքներ կրղխի այդ կէտէն: Վաղուց յայտ-
նի է Հայ ազգին մեր մեծ Բահանպապետի այս և
այլ հարկ եղած բաների վերաբերմամբ արած ջան-
քն ու ծիղն, որոնք անկասկած իւրեանց փրկա-
բար ազգեցութիւնը և պտուղներն ժամանակին
պիտի լծափեն Ազգի և Եկեղեցւոյ վերայ:

(ՍՆՈՒՆԻ Է ԵՊՈՒՄԱ)

ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑ

ՆՈՐԳԱՅ

ԽՈՒՄԻՆԻՆԻ ԱՐԱՐԱԿ ԿԱՌԱՐՈՒ

Մեր նորգայ երկսեռի Դպրոցաց Պ. Հոգա-
բարձուքը, Պ. Գէորգ Մ. Յովհաննէսեան և Պ.
Գրիգոր Աւետեան, որոց միջոյ տարէն շրջանը լրա-
նալով, անցնալ Փետր. 10ին՝ խնդիր ներկայաց-
րին տեղական հոգեւոր խխանութեան, ի մասին
հրաժարուելու Հոգաբարձութեան պաշտօնից, ար-
գելաւիթ գնելով՝ իրենց սեպհական տնային գործ-
քերը:

Իսկ մեր բարեսէր Ժողովուրդը, որոնք լաւապէս
ճանաչում են ուսման հարկաւորութիւնը և միշտ
դիմումնն Աստուծոյն անց ներքին և արտաքին
պիտոյքների վերայ, որոց փութանակ, փութապէս
ընտրեցին հետեւեալ Հոգաբարձուքը, այն է՝ 1. Պ.
Մատթէոս Տէր Պօղոսեան. 2. վերստին Պ. Գէ-
որգ Մ. Յովհաննէսեան. 3. Մ. Պ. Սամուէլ Գա-
լստեան. 4. Պ. Իսահակ Տէր Աւետիքեանց, և
որոնք, արդէն հաստատուած վարումն իրենց
ազնիւ պաշտօնը:

Աւրջապէս մեծ յոյսերով լցուած ելլել, որ ինչ-
պէս այժմ, այս Դպրոցները արագ ընթանումնն
ուսման ասպարիզին մէջ, նոյնպէս և յառաջ կըն-
թանան, աշխատութեամբ բարեջան նորոգ Հոգա-
բարձուաց Հայոց նորգայ:

Աւստի խոնարհաբար խնդրելով . . . Խմբա-
գրութենէդ Արարատայ՝ տեղեք շնորհել մի անկիւ-
նումը այս փոքրիկ յօդուածիս, ի խրախուսու-
թիւն և ի քաջալերութիւն Հոգաբարձուաց:

ՍԵՐԱԿԵԱՆՈՒՆ ԵՒ ԱՆԴԱՄ

ՀՈԳԱԲԱՐԴՈՒՆԻՆԻ յԵՒԼ ԴԱՊՐՈՅԱՅ

ՊՕՂՈՒ Ա. ՎԱՀԱՆԱՅ ՏԷՐ ԱՒԵՐԷԷԱՆԵՅ
ԵՆԷԼԵՆ

Ի ԿՈՒՄԻՆԻՆԻ ՆՈՐԳ

Ի ԵՆ ԱՐԵՒԷՆ 1874 - 4